

ԳԵՐԱՆՆԵՐՆԻ ԱՆՑՅԱԼԻ ԱՆՈՐՈՇԻ (INFINITIV II) ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հ. Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ, Գ. Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Գերմաներենի քերականության մեջ ընդունված է, որ յուրաքանչյուր Infinitiv (բայի անորոշ ձև) ունենում է իր ներկան և անցյալը, որոնք համապատասխանաբար անվանվում են Infinitiv Präsens (=Infinitiv I) և Infinitiv Perfekt (=Infinitiv II)¹: Այս անվանումները հատկանշական են ինչպես Aktiv-ի (ներգործական սեռի), այնպես էլ Vorgangspassiv-ի (ընթացքի կրավորականի) և Zustandspassiv-ի (վիճակի կրավորականի) ձևերին:

Գործողության յուրահատուկ կրավորականությունը Zustandspassiv-ում ներկայացվում է sein+Partizip II կապակցությամբ, որով արտահայտվում է այն կրավորական վիճակը, որի մեջ գտնվում է տվյալ նախադասության ենթական, վիճակ, որը նախապես կատարված որևէ գործողության ինչ-որ մակարդակով (թերի կամ լրիվ) ավարտված արդյունքն է: Օրինակ՝

Das Land **ist befreit**. Երկիրն **ազատագրված է**:

Ինքնին հասկանալի է, որ այս նախադասության մեջ արտահայտվող ավարտված գործողությունն արդեն իսկ անցյալ է, բայց Zustandspassiv Infinitiv I-ն իր քերականական ժամանակային կերպի մեջ ներկա է և անվանվում է Zustandspassiv Infinitiv Präsens (օր.՝ befreit sein=**ազատագրված լինել**): Իսկ նրա անցյալը Zustandspassiv Infinitiv II-ը, իրենից ներկայացնում է անցյալի անցյալ վիճակի կրավորական, որն իր կառույցով տալիս է վերոհիշյալ անորոշ ձևի անցյալը՝ Perfekt-ը, որի քերականական անվանումը կլինի Zustandspassiv Infinitiv Perfekt (օր.՝ befreit gewesen sein=**ազատագրված եղած լինել**): Ի դեպ, այս Infinitiv-ի հայերեն թարգմանության անորոշ կառույցը նույն իմաստը կարող է արտահայտել նաև առանց **«եղած»** բաղադրիչի, հմտո՝ **«ազատագրված եղած լինել»** և **«ազատագրված լինել»**:

Zustandspassiv Infinitiv II-ը (Zustandspassiv Infinitiv Perfekt-ը) այն **«անցյալի անցյալի անորոշ»** ձևն է, որի հիման վրա կազմվում են Zustandspassiv-ի Perfekt և Plusquamperfekt ժամանակային ձևերը: Հմտո.

Inf. I	<p>Präs.: Das Land ist (vom Volk)² befreit.</p> <p>Prät.: Das Land war ... befreit.</p>	<p>Երկիրն ազատագրված է (ժողովրդի կողմից):</p> <p>Երկիրն ազատագրված էր...</p>
Inf. II	<p>Perf.: Das Land ist ... befreit gewesen.</p> <p>Plusqu.: Das Land war ... befreit gewesen.</p>	<p>Երկիրն ազատագրված է եղել...</p> <p>Երկիրն ազատագրված էր եղել...</p>

Zustandspassiv-ով տրվող գործողության հատկանիշն իրենից ներկայացնում է մի երևույթ, որը թվում է, թե կարող է լինել միայն անցողական բայերից կազմվող sein+Partizip II կապակցության Zustandspassiv Infinitiv Perfekt ձևի առնչությամբ (befreit gewesen sein=**ազատագրված եղած լինել**), որն անհրաժեշտության դեպքում կարող է նաև ուղեկցվել մոդալ բայով (օր.՝ Das Land kann befreit gewesen sein.=**երկիրը կարող է ազատագրված եղած լինել**): Սակայն մանրագնին ուսում-

¹ Հղովածի սահմանները թույլ չեն տալիս խոսել նաև ապառնի անորոշ ձևերի մասին:

² Zustandspassiv-ում կարելի է նաև բաց թողնել նախադասության տրամաբանական ենթական:

նասիրությունից պարզվում է, որ այդ քերականական երևույթը համարաբանությամբ տարածվում է նաև այսպես կոչված «haben+Partizip II» ակտիվ կապակցության վրա, և արդյունքում ստացված հարադրությունը (օր.՝ *befreit gehabt haben*=ազատագրած եղած լինել) գերմաներենում հայերենի նման հազվադեպ ու բացառիկ երևույթ է, ուստի և՛ հատուկ ուշադրության արժանի. երևույթ, որի և՛ գերմաներեն, և՛ հայերեն կառույցները մեր կողմից ընդունվում են անվերապահորեն:

Haben-ով և sein-ով վերոհիշյալ երկու կապակցությունների միջև եղած կառուցվածքային տարբերությունն այն է, որ եթե sein+Partizip II կապակցության Infinitiv II-ը կազմելիս որպես օժանդակ բայ ընտրվում է sein-ը, քանզի sein բայն առհասարակ թեքվում է sein օժանդակով³, ապա haben+Partizip II կապակցության համար նրա էկզոտիկ Infinitiv II-ը կազմելիս որպես օժանդակ բայ է ընդունվում haben-ը, քանի որ haben բայն առհասարակ թեքվում է haben օժանդակով:

Այս հազվադեպ և արտասովոր երևույթն ի թիվս այլոց քննարկել են նաև նշանավոր լեզվաբաններ Վ. Ադմոնին և Ռ. Էնգելը⁴:

Գերմաներենի ժամանակային ձևերի գործածության, ավելի կոնկրետ՝ ներկա և անցյալ ժամանակային ձևերի փոխհաջորդման մասին խոսելիս Վ. Ադմոնին նշում է, որ եթե համատեքստում երբեմն խախտվում է հիմնական ժամանակային ձևերի հերթական կարգը, ապա այդ պահին օգնության են հասնում հարաբերական ժամանակային ձևերը: Իսկ սրանց էլ անբավարար լինելու դեպքում գործում է ժամանակային ձևերի փոխհաջորդումը՝ որպես տարժամանակություն արտահայտելու միջոց: Դա ստացվում է նրանից, որ քերականական ու տեքստային ժամանակային ձևերի փոխհարաբերության հարցում տեքստում ի հայտ եկող ձևերի բազմազանությունը չի հավասարակշռում քերականության մեջ ներկայացվող առկա ձևերին⁵: Այդ իսկ պատճառով Plusquamperfekt-ի կողքին օգտագործված Präterit-ն այդ Plusquamperfekt-ի համեմատությամբ կարող է արտահայտել նախաժամանակություն՝ հաճախ ժամանակային ցուցիչի՝ մակբայի միջամտությամբ: Օրինակ՝

Frau Hardekopf **hatte** die bucklige Nachbarin Frau Bollers, die nicht schnell genug **Platz machte, beiseite geschoben** (Bredel)⁶. Տիկին Հարդեքոփի մի կողմ էր ելել կուզիկ հարևանուհի տիկին Բոլլերսին, որը նույն պահին տեղ չուվեց (տեղ չէր տվել, մի կողմ էր ելել): Հայերենում նպատակահարմար է նաև երկու ստորոգյալներն էլ արտահայտել վաղակատար անցյալով՝ ... տեղ չէր տվել ... մի կողմ էր ելել:

Թեև խիստ հազվադեպ, բայց և կարող է նախադասության մեջ ի հայտ գալ բացարձակապես տարբեր ժամանակային ձևերի միախառնում՝ քաղաքկություն (Kontamination): Երբեմն նման ձևերի առաջացման պատճառ է դառնում Präterit-ից խոսափելու միտումը, որի հետևանքով զրկված լեզվի Plusquamperfekt-ին փոխարինելու նպատակով խոսակցական լեզվում ի հայտ է գալիս որպես այդպիսին գոյություն չունեցող «գերվաղակատար ներկա» (gesteigertes Perfekt) ժամանակային ձևը: Օրինակ՝

Auf der langen Bahnfahrt hat der Karl einen furchtbaren Hunger **gekriegt**. Am Morgen **hat** er nämlich **kein Frühstück gegessen gehabt**⁷. Երկարտոլային այդ երկար երթից Բարը սաստիկ սովածացել է: Ախր նա առավոտյան էլ նախաճաշ կեբած չի եղել (... չէր նախաճաշել, ... սովածացել էր ... նախաճաշ չէր կերել):

Լավ է, որ Վ. Ադմոնին այս պարագայում առաջ է քաշում ժամանակների փոխհաջորդ-

³ Այս երևույթի առնչությամբ հատուկ առանձնացվում է եղանակավորող գործառնային ունեցող haben բայի և լիարժեք sein-ի ինքնատիպ կապակցությունը: Հմտ. Er hat um 8 Uhr zu Hause zu sein. — Er muss um 8 Uhr zu Hause sein. — Ես պարտավոր եմ ժամը 8-ին տանը լինել: ... und die Fingernägel ... haben immer sauber zu sein (Karl-Heinz Drochner. Texte von heute, Ismaning, 1993, S. 93) — ... իսկ եղունգները... միշտ պիտի մաքուր լինեն: Բերված նախադասություններում haben-ը օժանդակի գործառնային չունի:

⁴ Sie u. W. Admoni. Der deutsche Sprachbau, Leningrad, 1972, SS. 191—192, U. Engel. Deutsche Grammatik, Heidelberg, 1996, էջ 421:

⁵ Նմանատիպ միտք է արտահայտում նաև Ա. Տոնոյանն իր «Սահմանական եղանակի անցյալի ժամանակային համակարգի պրագմատիկ-համադրական ուսումնասիրություն գերմաներենում և հայերենում» աշխատության մեջ (Երևան, 1989, էջ 3—10), որտեղից հետևում է, որ յուրաքանչյուր լեզվում ընկալվող ժամանակային իմաստներն ավելի շատ են, քան ներկայացվող ու գործող ժամանակային ձևերը, և զրա պատճառն այն է, որ ժամանակային ձևերը բազմիմաստ են և իրենց կոնկրետ քննարկությունն ունենում են համատեքստում:

⁶ Օրինակը վերցված է Վ. Ադմոնիի վերը նշված աղբյուրից:

⁷ Նույն տեղում:

ման և դրա հետ կապված բաղադրության ու գերվաղակատար ներկայի «ակամա ծննդյան» հարցերը, բայց ոչինչ չի ասում տվյալ իրավիճակում **haben+Partizip II** կապակցության միջոցով **sein+Partizip II**-ի համաբանությամբ գործողության անցյալի անցյալ ներկայացնելու հնարավորության ու փաստի մասին՝ առանց **Plusquamperfekt** ժամանակային ձևին դիմելու: Վերը բերված նախադասության մեջ բայն ունի հազվադեպ կառուցվածք, որի մոտակա ելակետային անորոշ ձևն է **gegessen gehabt haben (=կերած եղած լինել)**, որտեղ լիարժեք բայը (**essen=ուտել**) տրված է **Infinitiv II**-ով՝ անցյալի անորոշով (**gegessen haben=կերած լինել**) որպես արդեն ավարտված գործողություն, և հաջորդ բայլին այդ **Infinitiv II perfektiv** ձևն ինքն է ներկայացված նոր **Infinitiv Perfekt** ձևով, ու ստացվել է հորինված մի նոր ձև (**gegessen gehabt haben=կերած եղած լինել**), որը թեև քերականորեն անբարձրված չէ, բայց ինչպես երևում է, գործածելի է: Դրանով իսկ պարզվում է, որ ինչպես **sein+Partizip II** կապակցության **Infinitiv Perfekt**-ի (**befreit gewesen sein=ազատագրված եղած լինել**), այնպես էլ **haben+Partizip II Infinitiv Perfekt** «չիճծու» կապակցության (հմտ. օր.՝ **befreit gehabt haben=ազատագրած եղած լինել**) իմաստի մեջ կա «անցյալի անցյալի անորոշի» գաղափարը: «Անցյալի անցյալի անորոշի» իմաստ ունեցող, սակայն դեռևս անուն չունեցող այդ կառույցները ենթադրում ենք, որ կանվանվեին՝

ա) **haben+Partizip II Infinitiv Perfekt** կամ **Infinitiv II Perfekt Aktiv**

(**befreit gehabt haben=ազատագրած եղած լինել**),

բ) **sein+Partizip II Infinitiv Perfekt** կամ **Infinitiv Perfekt Zustandspassiv**

(**befreit gewesen sein=ազատագրված եղած լինել**):

Կազմված ձևերի հայերեն համարժեքներից նույնպես իսկույն նկատվում է, որ գերմաներենում **haben**-ով արտահայտվում է ներգործական, իսկ **sein**-ով՝ կրավորական իմաստ:

Sein+Partizip II-ով կազմվող ժամանակային ձևերը լայն գործածություն ունեն գերմաներենում: Գործածական պետք է համարել նաև **Infinitiv II Perfekt Aktiv**-ից կազմվող ժամանակային ձևերը, հետևաբար նաև հիշյալ երկու (ա, բ) կապակցությունների հայերեն համարժեքները՝ որպես տվյալ պահին գործածության համար խիստ անհրաժեշտ վաղանցյալ հարաբերական ժամանակային ձևի բացառիկ հազվադեպություն, կապակցություններ, որոնց խոնարհված ձևերով ևս ներկայացվում է վաղակատար ներկա գործողության համեմատությամբ ինչ-որ անցյալ գործողություն, որը դեռ ամենևին էլ վաղակատար անցյալը՝ **Plusquamperfekt**-ը չէ: Այստեղ հարց է ծագում՝ հնարավոր է արդյոք **gesteigertes Perfekt**-ի (գերվաղակատար ներկայի) համաբանությամբ կազմել նաև **gesteigertes Plusquamperfekt** (գերվաղակատար անցյալ) հարաբերական ժամանակային ձև: Պարզվում է՝ այո՛, այն էլ՝ թե՛ սահմանակամ, թե՛ պայմանական եղանակներով: Օրինակ՝

Hier hast du deine Hundemarke wieder! **Hab** sie ganz **vergessen gehabt**. (E. M. Remarque. Drei Kameraden, Moskau, 1960, S. 106) — Վերցրո՛ւ շան պատկերով քալիսմանդ: Լրիվ մոռացել էի այն:

Es waren nur zwölf Augen, und er **hätte** mit fünfzehn **gewonnen gehabt**. (Նույն տեղում, էջ 368):

— Եղածը միայն տասներկու միավոր էր, իսկ նա **շահած կլիներ (կշահեր)** տասնհինգով:

Ich **hatte** meinen Tornister nicht vorschriftsmäßig **gepackt gehabt** ... (Նույն տեղում, էջ 21):

— Ես իմ կաշեպարկը պահանջված ձևով **փաթաթած (հավաքած)** չէի եղել (չէի **փաթաթել**)...

Հայերեն թարգմանության բոլոր համարժեքներում ստացվում է մատուցվող ժամանակի անցյալի ձևը (վաղակատար անցյալ, հարակատարի վաղակատար անցյալ, հարակատարի ենթադրական անցյալի ապամի, ենթադրական անցյալի ապամի):

Վերջին նախադասության մեջ բայի անորոշ ձևը հայերենում լինում է՝ «**փաթաթած եղած լինել**», որը «**փաթաթած լինել**» հարադրության անցյալի ձևն է: Տվյալ «**փաթաթած լինել**» անորոշից դիմավոր ձևեր կազմելիս ստացվում են՝ **ես փաթաթել եմ...**, **ես փաթաթել էի...** վաղակատար ներկա և անցյալ հիմնական ժամանակային ձևերը, իսկ երկրորդական բաղադրյալ ժամանակները կստացվեն. հարակատարի ներկա և անցյալ՝ **փաթաթած եմ լինում**, **փաթաթած էի լինում**, հարակատարի վաղակատար և անցյալի վաղատակար՝ **փաթաթած եմ եղել**, **փաթաթած էի եղել**: Այսինքն՝ «**փաթաթած եղած լինել**» բաղադրյալ անորոշից դիմավոր ձև կազմելիս «**փաթաթած**» հարակատարի ձևը մնում է նույնությամբ. իսկ «**եղած լինել**» անցյալի անորոշից կազմվում են վաղակատար ներկան ու անցյալը: Հմտ.

փաթաթած եղած լինել → վաղանցյալ անորոշ,

↓ ↓

փաթաթած եղել են → վաղակատար ներկա (երկրորդական բաղադրյալ),

փաթաթած եղել էի → վաղակատար անցյալ (երկրորդական բաղադրյալ):

Ակներև է, որ բաղադրյալ անորոշ կապակցության վերջին «լինել» օժանդակ բայը դիմավոր ձևերում միանգամից փոխարկվում է **եմ...**, **էի...** օժանդակ բայի: Իսկ ինչ վերաբերում է «եղած» ձևին, ապա անցյալի անորոշի կառույցից դիմավոր ձևեր կազմելիս արդի արևելահայերենում հարակատարի ձևը տեղափոխվում է վաղակատարի հուն: Իսկ եթե այդ վերջին «լինել» օժանդակ բայը խոնարհիկ հարադրությամբ, ապա կստացվեն առավել բաղադրյալ և մերժելի դիմավոր ձևեր: Հմմտ.

* փաթաթած եղած եմ (էի) լինում⁸,

* փաթաթած եղած եմ (էի) եղել:

Գերմաներենում կատարված մանրագին ուսումնասիրությամբ բացահայտվում է նաև, որ վերը նշված բաղադրության գործածելի ձևը կարող է քնորոշ լինել ոչ միայն *haben* օժանդակ բայով թեքվող անցողական, այլ նաև *sein* օժանդակ բայով թեքվող անանցողական բայերին, և *Aktiv-*ում կունենանք այսպիսի կապակցություն՝ *gegangen gewesen sein* (=գնացած եղած լինել): Օրինակ՝

Es stellte sich heraus, das Kind **sei** ins Geschäft **gegangen gewesen** und **habe** für seine Groschen nicht Süßigkeit, sondern ein Buch **gekauft gehabt**. Պարզվեց, որ երեխան **գնացած է եղել** խանութ և իր գրողներով **գնած է եղել** ոչ թե բաղդրավենիք, այլ գիրք:

Այս նախադասությունն էլ հուշում է, որ բաղադրությունը կարող է ինքնաբերաբար ստացվել նաև *Indikativ-ից Konjunktiv-ին* անցնելիս այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում ոչ պայմանական (*nicht konjunktivisch*) *Plusquamperfekt-ի* համար միանգամից կրկնակի հարասությամբ երկակի *Perfekt-ով* կազմել կամ ներկայացնել նույն մտքի անուղղակի վերարտադրումը պայմանական նախադասությամբ: Իսկ նախադասությունը պայմանականով է տրվում գերմաներենում անուղղակի խոսքի և երկրորդական նախադասության վրա տարածվող համապատասխան քերականական օրենքի համաձայն: Հմմտ.

Das Kind **hatte** ein Buch **gekauft**.

Երեխան գիրք էր գնել:

Das Kind **habe** ein Buch **gekauft gehabt**.

Երեխան գիրք է գնած եղել:

Այս առնչությամբ Ու. Էնգելը գրում է. «Konjunktiv I-ը (իմա՝ Konjunktiv Perfekt-ը— Հ. Ղ. Գ. Ղ.) իր «երկակի *Perfekt-ով*», որը համապատասխանում է ոչ պայմանական *Plusquamperfekt* ժամանակային ձևին, ունենում է լրացուցիչ ձև»⁹:

Գերմաներենում *sein+Partizip II Perfekt* կապակցության մնան *haben+Partizip II Perfekt* կապակցությունը ևս կարող է նախադասության մեջ գործածվել մոդալ բայի ուղեկցությամբ: Բայց, ցավոք, հիշյալ վերջին կառուցվածքով նախադասությունները հազիվ թե հեշտությամբ գտնվեն գեղարվեստական գրականության մեջ: Այդպիսի ձևեր կարող ենք կազմել ինքներս՝ *sein+Partizip II Perfekt* գործածելի ձևի համաբանությամբ: Հմմտ.

1) Er **kam** am vorderen Bandabschnitt **eingesetzt gewesen sein**. Նա կարող է նշանակված եղած լինել հարահոսի առջևի հատվածում:

Գեղարվեստական գրականության մեջ առկա է այս գերմաներեն նախադասության տարբերակը *sollen* մոդալ բայի ուղեկցությամբ՝ վերջինիս սուբյեկտիվ իմաստով, որի համարժեքը հայերենում լինում է «ստամ են»։ Er **soll** am vorderen Bandabschnitt **eingesetzt gewesen sein**. (Karl-Heinz Drochner: Texte von heute, Ismaning, 1993, S. 101) — **Ստամ են՝ նա նշանակված է եղել** հարահոսի առջևի հատվածում:

2) Das Benehmen des Sportlers **bezeugte**, dass er auch Narkotikum **gebraucht gehabt haben konnte**. Մարզիկի վարքագիծը վկայում էր, որ նա կարող էր նաև թմրադեղ օգտագործած եղած լինել (... կարող է նաև թմրադեղ օգտագործած եղած լինել):

⁸ Սույն հոդվածում աստղանիշով (*) տրվող ձևերը մերժելի են:

⁹ U. Engel. Deutsche Grammatik, S. 421.

Գերմաներենի բայական այս կարգի բաղադրյալ կառույցներին ուղեկցող մոդալ բայն ունենում է սուբյեկտիվ իմաստ, որով արտահայտվում է ոչ թե նախադասության ենթակայի, այլ խոսողի վերաբերմունքը տվյալ նախադասության մեջ ներկայացվող գործողության կամ երևույթի նկատմամբ: Մեր բերած օրինակների պարագայում können մոդալ բայով արտահայտվում է հավանական հնարավորությունների թվից առանձնացված ենթադրվող եզրակացություն՝ լուրջ համոզվածությամբ. ընդ որում չեն բացառվում նաև ակնկալվող ու չակնկալվող այլ հնարավորություններ և ս: Սուբյեկտիվ իմաստով այս մոդալ բայի հայերեն համարժեքներն են՝ **հնարավոր լինել (հնարավոր է), կարող լինել (կարող է), կարելի լինել (կարելի է)** և այլն: Այս մոդալ բայը կարող է օգտագործվել Indikativ-ի (սահմանական եղանակի) ներկայի (kann) և անցյալի (konnte) ձևերով: Նրա Konjunktiv II (ստորադասական կամ պայմանական անցյալ) ձևով (konnte) չի արտահայտվում նոր կարգի յուրահատուկ արժեք կամ նշանակություն, այլ միայն սահմանականում ունեցած իմաստը պարզապես ստանում է ենթադրական անցյալի եղանակավորում: Հմտ.

1) *Er konnte/könnte ... eingesetzt gewesen sein.* Նա կարող էր նշանակված եղած լինել... Նա կարող է նշանակված եղած լինել... Հնարավոր է որ նա նշանակված եղած լինել...

2) ... dass er auch Narkotikum **gebraucht gehabt haben könnte...** որ նա հնարավոր է նաև քնդդեղ օգտագործած եղած լինել: (Տես նաև այս նախադասության վերը տրված թարգմանության տարբերակները):

Ստացվում է, որ վերևում sein+Partizip II Perfekt-ին վերաբերող ու մանրամասնորեն ներկայացված երևույթը մոտավորապես նույն սկզբունքով հնարավոր է կիրառել haben+Partizip II Perfekt կապակցության նկատմամբ:

Մեզ մնում է միայն որպես հիշեցում ավելացնել, որ գերմաներենում վերոհիշյալ ձևի բաղադրություն չի թույլատրվում կազմել haben և sein լիարժեք բայերի նկատմամբ, քանզի արդյունքում ստացվում է անհեթեթ կապակցություն՝ նույնահունչ բայերի կրկնությամբ: Հմտ.

* *Er hat/hätte interessante Ideen gehabt gehabt.* Նա հետաքրքիր գաղափարներ է (եր) մտնցած եղել:

* *Er ist/war sonntags auf dem Lande gewesen gewesen.* * Կիրակի օրերին նա գյուղում է եղած եղել:

Նախավերջին նախադասությունը հայերենում բարեհունչ է ստացվում, քանի որ նրանում նույնահունչ բայերի կրկնություն չկա՝ «**մտննալ**» լիարժեք բայի հետ «**լինել**» օժանդակ բայի գործածության հետևանքով. բանն այն է, որ զրական արևելահայերենի անցյալի անորոշի միակ օժանդակ բայն այսօր «**լինել**» բայն է:

У. А. Гукасян, Г. Г. Гукасян - *Проявления немецкого Infinitiv II в контаминациях.* - Форма Zustandspassiv Infinitiv II в немецком языке (например: befreit gewesen sein) предпрошедшая неопределенная форма глагола, при помощи которой образуются временные формы пассива состояния перфект и плюсквамперфект. По аналогии этой формы в немецком языке можно образовать ее активную форму инфинитива (befreit gehabt haben). И если мы от этой формы образуем перфект, то получается форма так называемого "двойного перфекта", т. е. предпрошедшее время, которое пока вовсе не плюсквамперфект и в немецком называется gesteigertes Perfekt (ср. Das Kind hat/habe ein Buch gekauft gehabt. и другие приведенные в тексте соответствующие предложения). В итоге получается экзотичная грамматическая форма, которая считается контаминацией. Эта форма характерна не только переходным глаголом, спрягающимся вспомогательным глаголом haben, но и переходным глаголом с вспомогательным глаголом sein (например: gegangen gewesen sein). Такие инфинитивные формы, по нашему мнению, имеют свои "настоящие эквиваленты" в армянском, но не в русском языке. Ср.

befreit gewesen sein - ազատագրված եղած լինել,
befreit gehabt haben - ազատագրած եղած լինել,
gegangen gewesen sein - գնացած եղած լինել:

Правда, в армянском языке можно обойтись и без промежуточного слова եղած. Временные формы контаминации перфект и плюсквамперфект инфинитив можно образовать как в изъявительном, так и в основном наклонениях.